ՏԱՐՈՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ VIII ԴԱՐՈՒՄ

Գ. Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տարոն գավառը նշանակալից դեր է խաղացել հայ ժողովրդի քաղաքական, անտեսական և հոգևոր կյանքում։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Տարոնի պատմության կարևորությունը պայմանավորված է VIII դ. երկրորդ կեսին նրա համար հայկական երկու խոշոր ավատական տների՝ Մամիկոնյանների և Բագրատունիների մղած պայքարով։

Մ. Խորենացու վկայությամբ, Տարոնը դեռևս վաղ անցյալում բաժանված էր երկու մասի. նրա մի մասին՝ Ողական ամրոցով, տիրում էր Սլկունյաց նախարարական տոհմը, մյուս մասին՝ Աշտիշատ կենտրոնով, Վահևունիների քրմական տունը[1]։ IV դ. սկզբին, երբ Հայաստանում քրիստոնեությունն ընդունվեց որպես պետական պաշտոնական կրոն, Վահևունիների տիրույթն անցավ Գրիգոր Լուսավորչին և դարձավ կաթողիկոսական տան սեփականություն[2], իսկ Սլկունիների կալվածքները տրվեցին Մամիկոնյաններին՝ Արշակունիների թագավորության մեջ նրանց կողմից զինված ուժերի գլխավոր հրամանատարի՝ սպարապետի գործակալությունն ստանձնելու փոխարեն[3]։ Հողատիրության այս ձևը, թեև սկզբնական ժամանակաշրջանում պայմանական, ձեռական էր, սակայն հետագայում թագավորական իշխանության թուլացման հետևանքով դարձավ ժառանգական[4]։ Տարոնի մյուս մասն Աշտիշատով Մամիկոնյանները ժառանգեցին V դ. երեսնական թվականներին, երբ Սահակ կաթողիկոսն այն կտակեց իր դստերը՝ Սահականույշին, որն ամուսնացել էր Համազասպ Մամիկոնյանի հետ[5]։ Հայոց կաթողիկոսը ստիպված էր այդ քայլին դիմել, քանի որ նշված ժամանակաշրջանում Հայաստանում կուսակրոնության զարգացման հետևանքով վերանում էր եկեղեցու պետի պաշտոնին ժառանգաբար տիրելու նախկին կարգը, որով միաժամանակ սպառնալիք էր ստեղծվում կաթողիկոսի հողային սեփականության գոյությանը[6]։ Այս կտա-

---

1 «*Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց*», *Տփղիս, 1913, էջ 228, 122, հմմտ.* Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, стр. 309.

2 «*Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց*», *Վենետիկ, 1889, էջ 117, հմմտ.* Н. Адонц, *նշվ. աշխ., էջ 309,*

3 *Մ. Խորենացի, էջ 229։ Մամիկոնյանների հայրենական կալվածքը Տայքն էր (Փ. Բուզանդ, էջ 67, 132)։*

4 *Ս. Երեմյան, Պայմանական հողատիրության առաջացման հարցի շուրջը ֆեոդալականացող Հայաստանում «Ձեռական իշխանությունը» հին Հայաստանում («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 3—8)։*

5 «*Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան*», *Տփղիս, 1904, էջ 37։*

6 *Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 27։*

կով Մամիկոնյանները պետք է տիրություններ ձեռք բերած լինեին նաև Բագրևանդում[7]։

Հովհան Մամիկոնյանի վկայությամբ, VI դ. վերջերին Մուշեղ Մամիկոնյանն էր «ղտէրն Մշոյ և Խութայ, Տարօնոյ իշխանն և Սասնոյ»[8]։ Հիշյալ հաղորդումը հավանաբար չափազանցություն չէ, քանի որ կան այլ տվյալներ, որոնք նույնպես հաստատում են, որ Մամիկոնյանների տիրությունների սահմաններն ընդարձակվելով՝ Տարոնից տարածվել են հարևան շրջանների վրա։ Այսպես, 655 թ. Թեոդորոս Ռշտունու մահվանից հետո, նրա փեսան՝ Համազասպ Մամիկոնյանը ոչ միայն ստացավ հայոց իշխանի պաշտոնը, այլև, ըստ երևույթին, նաև տիրեց Բզնունիքին[9], քանի որ այնտեղ գտնվող Ձորապահակ լեռնանցքը (Տաւրոյ բերան) ուներ ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակություն. նրանով էր ամենակարճ ուղիով Միջագետքը կապվում Հայաստանի միջնաշխարհի հետ[10]։ Գրիգոր Մամիկոնյանի իշխանության ժամանակ (661—685) Մամիկոնյանները տիրություններ ձեռք բերեցին Արագածոտն գավառում՝ այնտեղ կառուցելով Աբուճի եկեղեցին[11]։

Այս ամենի շնորհիվ Մամիկոնյանները դարձան ընդարձակ հողատարածությունների սեփականատերեր։ Ավատատիրական հասարակական-տնտեսական կարգում հողի՝ որպես արտադրության հիմնական միջոցի, ունեցած կարևորությունն իր հերթին պայմանավորեց երկրի քաղաքական կյանքում նրանց առաջնակարգ դերը։

VIII դ. երկրորդ կեսին Հայաստանում արաբական տիրապետությունը նշանավորվեց հարկային լծի առավել ծանրացումով, երկրի ռազմական և տնտեսական ուժերի քայքայումով, ժողովրդական բոլոր խավերի, այդ թվում՝ աշխարհիկ ու հոգևոր ավատատերերի նկատմամբ հալածանքների սաստկացումով։ Դեռևս VIII դ. 20-ական թվականներին բնակչությունից գանձվող ծխահարկը փոխարինվեց գլխահարկով։ Բնատնտեսության տիրապետության պայմաններում դրամական հարկային սիստեմի կիրառումը ծայրահեղ աղքատության ու թշվառության հասցրեց երկրի բնակչությանը։ Այդ իրավիճակն արտացոլվել է 768 թ. Պարտավի եկեղեցաժողովի ընդունած ԺԴ կանոնում, որտեղ նշված է. «Որք չեւ հասեալ ի ժողովրդականաց յայն, որ ի նեղութենէ հարկաց անձինքն հասանեն ի վաճառ, եւ սակաւ ինչ ի գոյութեան լինի, եւ

---

[7] Ղ. Փարպեցի, էջ 37, հմմտ. C. Toumanoff, Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963, p. 209.

[8] «Հովհաննու Մամիկոնեի եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ, 1832, էջ 13, տես, նաև «Հովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ», Երևան, 1941, էջ 158։

[9] C. Toumanoff, նշվ. աշխ., էջ 213։

[10] Ս. Երեմյան, Հայաստանը ըստ Աշխարհացույցի, Երևան, 1963, էջ 44։

[11] «Պատմութիւն Ղեոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 15, հմմտ. Գ. Հովսեփյան, Քարտեզ հայ հնագրության, Վաղարշապատ, 1913, տախտակ Զ, հմմտ նաև И. А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, стр. 401—404: Ա. Տեր-Ղևոնդյանը հենվելով VIII դ. ասորի պատմիչ Դիոնիսիոս Տել Մահրացուն վերագրված երկի տվյալների վրա, ցույց է տալիս, որ 749—752 թթ. Հայաստանի հարավային մասում և լեռնային Սասունում արաբական տիրապետության դեմ բռնկել էր ապստամբություն։ Նա միաժամանակ նշում է, որ հիշյալ շրջանները գտնվում էին Մամիկոնյանների ազդեցության տակ (Ա. Տեր-Ղևոնդյան, Սասունի 749—752 թվականների անհայտ ապստամբությունը («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 3, էջ 200)։

վաճառեսցէ զեկեղեցի կամ զսպաս սրբութեան կամ ի կարասւոյ կամ յանդաստանաց եկեղեցւոյ՝ նզովեսցի յԱստուծոյ եւ ի մէնջ. եւ զայնպիսին մի՛ ոք կոչեսցէ քրիստոնեայ»[12]։

Հայաստանում Աբբասյանների օրոք հարկային խիստ քաղաքականությանն անդրադառնում է նաև Ղևոնդը։ Նրա վկայությունից տեղեկանում ենք, որ «...յոյժ ծանրացաւ անուր լծոյ հարկապահանջութեան ի վերայ աշխարհիս Հայոց... պի վախճանեաց զգիւտ արծաթոյ ի յերկրէս, և ամենայն ոք տալով գպաճարանս ընչից իւրեանց՝ ոչ դտանէին զդինս փրկանաց անձին իւրեանց. և չար կտտանօք գելարանօք և կախաղանօք և դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան»[13]։

Սոցիալական նման ճնշման ու շահագործման պայմաններում, բնականաբար, առաջին հերթին ծանրանալու էր շահագործվող դասակարգի վիճակը։ Բայց հայ նախարարները ևս կամա թե ակամա «...յաճախէին տալ ընծայս ձիոց ջորւոց և հանդերձից պատուականաց և զայլ մթերս ոսկւոյ և արծաթոյ, որպէս զի կարասցեն լնուլ զբերան վիշապին որ յարձակեալ էր ապականել զերկիրս»[14]։

Արաբներին «ընծաներ» տվող հայ նախարարներն իրենց հերթին սաստկացնում էին հայ աշխատավոր զանգվածների շահագործումը։

Հայաստանում Աբբասյան խալիֆայության գերիշխանությունը նշանավորվեց նաև հայ նախարարների՝ որպես երկրի ինքնուրույնության պատվարի դեմ մղված պայքարի ուժեղացմամբ։ Այդ քաղաքականությունն իր սուր ծայրով ուղղվեց հատկապես Մամիկոնյանների դեմ, որովհետև նրանք արաբական տիրապետության ժամանակաշրջանում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի ոգեշնչողներն ու կազմակերպիչներն էին։ Այդ գործում հաջողության հասնելու համար նրանք հաճախ ապավինում էին Բյուզանդական կայսրությանը, որը արաբների մոտ առաջ էր բերում Մամիկոնյանների նկատմամբ անվստահություն և նրանց երկրի քաղաքական կյանքից մեկուսացնելու ձգտում։ Հակառակ Մամիկոնյանների, Բագրատունիներն ավելի շուտ հակվեցին դեպի խալիֆայությունը, քան՝ Բյուզանդիան։ Դա նպաստեց Բագրատունիների նկատմամբ արաբների ցուցաբերած վստահության մեծացմանը։ Սակայն խալիֆայությունը, ի հակակշիռ Մամիկոնյանների, առաջին պլան մղելով Բագրատունիներին, անշուշտ, նպատակ չուներ վարձահատույց լինել վերջիններիս՝ իր հանդեպ դրսևորող բարյացակամության ու հավատարմության համար։ Այստեղ կարևորն այն էր, որ Բագրատունիների միջոցով նա կպայքարեր Մամիկոնյանների ունեցած մեծ ազդեցության դեմ և դրանով կսրեր երկրի ներքին կյանքում մղվող պայքարը, որը կթուլացներ թե՛ մեկ, և թե՛ մյուս նախարարությանը։ Այս քաղաքականությունն այնքան հատկանշական էր, որ անգամ 750 թ., երբ խալիֆայության մեջ բռնկված գահակալական կռիվներում Բագրատունիները հանդես եկան Օմայանների հակառակորդների դեմ և թվում էր, որ հաղթանակած Աբբասյանները հաշվեհարդար կտեսնեն նրանց հետ ու ավելի շուտ կգերադասեն Մամիկոնյաններին, Հայաստանում

---

12 «Կանոնագիրք Հայոց», հ. Բ, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1971, էջ 11։

13 Ղևոնդ, էջ 135։

14 Նույն տեղում, էջ 128։

առաջնությունը դարձյալ տրվեց Բագրատունիներին։ Այսպես, 753 թ. սկսած, այսինքն՝ Մուշեղ Մամիկոնյանի իշխանությունից հետո, հայոց իշխանի պաշտոնը գերազանցապես սկսեցին զբաղեցնել Բագրատունիները[15]։

Հայաստանում խալիֆայության վարած քաղաքականությունը կտրուկ շրջադարձ ապրեց VIII դ. երկրորդ կեսին, երբ իշխանության գլուխ անցան Աբբասյանները։ Աբբասյան խալիֆայությունը տնտեսական լուրջ դժվարությունների առաջ կանգնեց, երբ նրանից որոշ երկրներ անկախացան[16]։ Դրա հետևանքով նվազեցին պետության եկամուտները։ Պետությունը մշտապես դրամական կարիքի մեջ էր նոր մայրաքաղաքի՝ Բաղդադի հիմնադրման (762), ինչպես նաև խալիֆաների շռայլ ու ցոփ կենցաղի հետևանքով։ Երկրի տնտեսական կյանքում առաջացած այս դժվարություններն Աբբասյանները փորձում էին հաղթահարել իրենց տիրապետության տակ գտնվող ժողովուրդների վրա դրված հարկային լծի սաստկացումով։

Ի տարբերություն նախորդ՝ Օմայան հարստության, որն ամենից առաջ արաբական էր, այսինքն, երկրի քաղաքական կյանքին կարող էր մասնակցել միայն արաբը, Աբբասյան հարստությունը դարձավ համամահմեդական, և առանց ազգային պատկանելությունը հաշվի առնելու այդ իրավունքն արտոնվեց մահմեդականին[17]։

Աբբասյան խալիֆայությունը ձգտում էր իր կոսմոպոլիտ պետությունը համախմբել մեկ միության մեջ՝ հիմնված ընդհանուր հավատի և շահերի վրա։

Հայաստանն արաբների կողմից նվաճվելով հանդերձ՝ պահպանել էր հարաբերական ինքնուրույնությունը և խոչընդոտ էր Աբբասյանների քաղաքական ծրագրի իրականացման ճանապարհին։ Եվ բնական է, որ այն վերացնելու նպատակին պիտի ուղղվեր առաջին հարվածը։ Բացի այդ, խալիֆայության համար առանձնահատուկ նշանակություն ուներ Բյուզանդիային և խազարներին սահմանակից երկրներում ամրություններ ստեղծելն ու այդ կարևոր կետերը արաբական բնակչությամբ բնակեցնելը։ Դա արվում էր հիմնական թշնամիների դեմ պայքարելու, ինչպես նաև համապատասխան շրջանների բնակչությանը հնազանդ պահելու նպատակով։ Արաբա-բյուզանդական տևական ռազմական մրցակցության պայմաններում առաջնակարգ նշանակություն ունեին սահմանային ամրությունների այն շղթան ու նրա օժանդակ կետերը, որոնք սկիզբ էին առնում Կիլիկիայից և ձգվում մինչև Եփրատի ակունքները[18]։ Պաշտպանական այդ գոտին հայտնի է Սուղուր անունով[19]։ Ամրությունների այս շղթան ու նրա մերձակա կետերը ոչ միայն արևմուտքից էին մոտեցել Մամիկոնյանների տիրույթներին, այլև՝ հարավից։ Հարավում ևս, դարձյալ նշված նպատակներով, Մամիկոնյանների կալվածքներին էր սահմանակցել

---

15 Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյանի կազմած հայոց իշխանների ցուցակը («Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 130)։

16 B. Lewis, Abbasids, The Encyclopaedia of Islam, vol. 1, Leiden—London, 1965, p. 18.

17 P. Hitti, History of the Arabs, London, 1946, p. 289, B. Lewis, նշվ. աշխ., էջ 17, հմմտ. Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց՝ Հայաստանում, Երևան, 1965, էջ 44։

18 А. А. Васильев, Византия и арабы. Политические отношения Византии и арабов за время Аморийской династии, СПб., 1900, стр. 78—79.

19 E. Honnigmann, al-Thughur, The Encyclopaedia of Islam, Leyden—London, 1929, Fasciculus K, p. 738—739.

արաբներով բնակեցված Ջազիրա նահանգը։ Անդամ նրա առանձին շրջանները կոչվում էին այնտեղ հաստատված ցեղերի անուններով՝ Դիար Ռաբիա, Դիար Մուդար և Դիար Բաքր[20]։ Այդ ցեղերն արաբական նվաճումների հենց սկզբից հաստատվելով այստեղ՝ ընդհուպ մոտեցել էին Տարոնին և Մամիկոնյանների հարավային մյուս տիրույթներին՝ սպառնալով նրանց դոյությանը։

Միանգամայն պարզ է, որ Հայաստանի քաղաքական կյանքից մեկուսանալու վտանգը, ինչպես նաև սեփական հողային տիրույթները կորցնելու իրողության գիտակցումը Մամիկոնյաններին մղեց կազմակերպելու և գլխավորելու VIII դ. երկրորդ կեսի ժողովրդական ապստամբությունները, որոնք ուղղված լինելով խալիֆայության դեմ, առաջին հերթին, լայն զանգվածների անսահման կեղեքման, ազգային ու կրոնական դաժան հալածանքների արդյունք էին։

Պատմագրության մեջ փորձ է արվել ցույց տալու, թե իբր արաբական տիրապետության ժամանակաշրջանում Անդրկովկասի ավատատերերի ժառանգական սեփականատիրական իրավունքները գրեթե չեն ոտնահարվել, որ էական տարբերություն է դրվել տեղական արար և ոչ արաբ ավատատերերի հակախալիֆայական ելույթների միջև։ Ընդսմին, նշվել է, որ եթե առաջինները վճռականորեն պայքարել են խալիֆայության դեմ՝ անկախության հասնելու նպատակով, ապա վերջինները չեն փորձել թոթափել արաբական լուծը, այլ սահմանափակվել են սոսկ արաբ կառավարիչների հարստահարությունների և ապօրինությունների դեմ ուղղված ելույթներով կամ իրենց ենթակա շրջանների կառավարումով։ Վերջապես, գտնվելով խալիֆայության տիրապետության օղակում, Անդրկովկասն իբր ղերծ է մնացել «հյուսիսի բարբարոս ցեղերի» ու բյուզանդացիների ասպատակություններից[21]։

Հայտնի է, որ սկզբնական ժամանակաշրջանում արաբական տիրապետությունը Հայաստանում բավական տանելի էր[22]։ Հայոց եկեղեցին և ավատատերերն օգտվում էին մի շարք արտոնություններից, որոնք վավերացվում էին խալիֆայության և նրանց միջև կնքված տարբեր պայմանագրերով[23]։ Հետագայում, սակայն, խալիֆայության կողմից Հայաստանում հարկային լծի ծանրացումը, արաբական ցեղերի զանգվածային ներգաղթը, երկրի լավագույն հողերի բռնագրավումը, բնակչության հարկադիր արտագաղթը, նախարարների նկատմամբ դրսևորած հալածանքների և ոչնչացման քաղաքականությունն ակնբախ են դարձնում հայ ժողովրդի բոլոր խավերի նկատմամբ արաբների կիրառած քաղաքականության խստությունը։ Դրա հետևանքով էր, որ VIII դ. և հետագայում Հայաստանում բռնկվեցին ապստամբություններ, որոնք, հակառակ արդեն հիշատակված կարծիքի, նպատակ ունեին տապալել արաբա-

---

[20] M. Canard, al-Djazira, The Encyclopaedia of Islam, vol. 2, Leyden—London, 1965, p. 523, նույնի՝ Histoire de la dynastie des Hamdanides de Jazirah et de Syrie, Alger, 1951, p. 75—144.

[21] П. К. Жузе, Мутагаллибы в Закавказье в IX—X вв. («Материалы по истории Грузии и Кавказа», вып. III, Тбилиси, 1937, стр. 184—202).

[22] Հ. Մանանդյան, ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ (Քննական-տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 209, 211)։

[23] Ա. Տեր-Ղևոնդյան, Հայ նախարարների հողատիրական իրավունքները 7—9-րդ դդ. ըստ խալիֆայության պայմանագրերի («Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 4, էջ 20—34)։

կան լուծը։ Անդրադառնալով VIII դ. երկու ապստամբություններին, Ղևոնդը, օրինակ, գրում է. «...յայնժամ խորհեցան ամենայն նախարարք աշխարհիս ընկենուլ զլուծ հնազանդութեանն և ապստամբել և ի բաց կալ ի հնազանդութենէն Իսմայելի»[24], կամ «...լաւ համարեալ զմահ քաջութեամբ քան զկեանս վտանգաւոր՝ ձեռնամուխ եղեն յիրս ապստամբութեան, և ի բաց կացին ի հնազանդութենէն Իսմայելի»[25]։ Անգամ ապստամբությանը դեմ եղած հայ նախարարների խմբավորումը ոչ թե բացառում էր արաբական տիրապետության տապալման անհրաժեշտությունն ընդհանրապես, այլ ելնում էր ուժերի հարաբերակցությունից, քանի որ, ըստ նրանց, «...նուազունք են զօրքս մեր ի մէջ բռնութեանն Իսմայելի, և ոչ կարեմք զդէմ ունել զօրաց նոցա, և ոչ զերկիր մեր հանել ի բերանոյ վիշապացն»[26]։

Ինչ վերաբերում է արաբների կողմից «հյուսիսի բարբարոսների հարձակումներից Անդրկովկասի պաշտպանությանը», ապա Անդրկովկասը դարձել էր արաբա-խազարական հակամարտությունների թատերաբեմ[27]։

Բացի այդ, արաբական տիրապետության օրոք Հայաստանը, և ընդհանրապես Անդրկովկասը, թեև որոշ չափով զերծ մնացին բյուզանդական հարձակումներից, սակայն ենթարկվեցին արաբական ավերիչ ասպատակություններին։

774—775 թթ. ապստամբության ճնշման և հետագա հալածանքների հետևանքով հայկական նախարարական տները խիստ թուլացան, իսկ երկրի ինքնուրույն կյանքին միշտ նախանձախնդիր Մամիկոնյան տոհմի անդամները հարկադրված գաղթեցին Բյուզանդիա կամ Վրաստան[28]։ Նրանց տիրույթները զրկվելով իրենց պաշտպաններից, կանգնեցին արաբներով բնակեցվելու վտանգի առաջ, որովհետև հենց այս ապստամբությունից հետո և մասնավորապես Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի (786—809) օրոք էր, որ արաբական տարրի՝ Հայաստանում, և առհասարակ Անդրկովկասում, հաստատվելը զանգվածային բնույթ կրեց։ Օրինակ, Յակուբին հաղորդում է, թե ինչպես Արմինիայի ոստիկան Յուսուֆ իբն Ռաշիդ ալ Սուլամին (786—787) Հայաստան գաղթեցրեց նիզարիների ցեղը, իսկ Եզիդ իբն Մազյադ իբն Զայիդա ալ Շայբանին (787—788) այստեղ բերեց ռաբի ցեղը[29]։ Արաբների ներգաղթը շարունակվեց նաև հետագայում։ Հարուն ալ-Ռաշիդի տիրապետությունը թեև դիտվում է Աբբասյան պետության հզորության բարձրակետ[30], սակայն հենց այս ժամանակ արդեն երևան եկան նրա թուլացման նախանշանները[31]։

Հիշյալ ժամանակաշրջանում խալիֆայության տիրապետությունը Հայաստանում կայուն չէր։ Այդ ամենից առաջ արտահայտվում էր հայ նախարար-

---

24 Ղևոնդ, էջ 121 (այս և հետագա ընդգծումները մերն են—Գ. Գ.)։

25 Նույն տեղում, էջ 138։

26 Նույն տեղում, էջ 122։

27 М. И. Артамонов, История хазар, Ленинград, 1962, стр. 202—261.

28 Ղևոնդ, էջ 138—139, Cyril Toumanoff, The Mamikonids and the Liparitids, Armeniaca, Mélanges d'études Arméniennes, Ile de Saint Lazare—Venise, 1969, p. 125—137.

29 «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», հավաքեց և թարգմանեց Բ. Խալաթյանց, Վիեննա, 1919, էջ 111, հմմտ. Ց. Մարկվարտ, Հայ Բագրատունյաց ճյուղագրությունը, Վիեննա, 1913, էջ 36—37։

30 P. Hitti, նշվ. աշխ., էջ 299։

31 B. Lewis, նշվ. աշխ., էջ 18։

ների հաճախակի կրկնվող ելույթներով ու խազարների ասպատակություններով։ Բացի այդ, Հայաստանում վերաբնակեցված արաբական ցեղերի առաջնորդները գրավելով հայ ավատատերերի տիրույթները, հակախալիֆայական ընդվզումներով ու կենտրոնախույս ձգտումներով փորձում էին երկրում ամրապնդել սեփական դիրքերը։ Նրանց հնազանդեցումը կարևոր նշանակություն ուներ խալիֆայության համար[32]։

Հակախալիֆայական այս շարժումներից հատկապես հիշարժան է 794 թ. Աբու Մուսլիմ ալ-Շարիի խռովությունը։ Նա անգամ կարողացավ մի քանի ամիս շարունակ պաշարված վիճակում պահել Դվինը[33]։

Խալիֆայության դեմ ըմբոստացող ուժերից էին նաև VIII դ. վերջերին Հայաստանում հաստատված Ջահհաֆյանները։ Օգտվելով խալիֆայության, ինչպես նաև Մամիկոնյանների և մյուս հայ նախարարների թուլությունից, նրանք բոլոր միջոցներով փորձեցին երկրի տիրապետող ուժը դառնալ։ Նրանց առաջնորդ Ջահհաֆն ամուսնանալով Բագրևանդի ճակատամարտում զոհված Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ, տիրել էր Արշարունիք գավառի մի մասին և հավակնում էր ժառանգել Մամիկոնյանների ֆեոդալական մյուս տիրույթները, այսինքն, ինչպես Վարդան պատմիչն է նշում. «խորհէր տիրել ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին»[34]։ Վարդանի այս վկայությունից մակաբերվել է, թե իբր Ջահհաֆն ամուսնանալով Մամիկոնյան դստեր հետ, տիրեց նրանց տոհմի գրեթե բոլոր կալվածքներին[35]։ Մինչդեռ պատմիչը հստակ կերպով ասում է, որ Ջահհաֆը «խորհէր տիրել» և ոչ թե տիրում էր ու, ինչպես կտեսնենք, իր նպատակին նա չկարողացավ հասնել, քանի որ հանդիպեց Բագրատունիների դիմադրությանը։

Ջահհաֆի նմանօրինակ նկրտումը, հարկավ, իրավական որոշ հիմք ուներ, որովհետև Մուշեղ Մամիկոնյանի երկու որդիներն արաբական հալածանքներից խույս տալով և ապահովություն գտնելու նպատակով հաստատվել էին Վասպուրականում՝ Մերուժան Արծրունու մոտ։ Վերջինս, սակայն, սպանել էր նրանց՝ պատճառաբանելով «որպէս թէ ի պատճառս հօր նոցա եղև աղէտն մեծ»[36] (նկատի ունի ապստամբության ճնշումը)։ Հետաքրքիր է նաև այն շա-

---

32 Π. Κ. Ժ у з е, նշվ. աշխ., էջ 172—173։

33 «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 111—112։

34 «Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն Տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 105։ Վարդանը թեև այս դեպքերի ականատեսն ու ժամանակակիցը չէ, սակայն նրա երկը մեզ հետաքրքրող որոշ հարցերի առնչությամբ ստույգ ու վստահելի է, որովհետև, ինչպես ենթադրվում է, նրա աղբյուրներից է Շապուհ Բագրատունին։ Պատմիչի տվյալները, որոնց մի մասը լրացվում են արաբ հեղինակների հաղորդումով, խիստ կարևոր են ու եզակի (Ց. Մարկվարտ, նշվ. աշխ., էջ 33—34, Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1940, էջ 59—63)։

35 J. Laurent, L'Arménie entre Byzanse et l'Islam, Paris, 1919- p. 96; Լորանը չնայած մատնանշում է Մ. Բրոսսեի „Collection d'historiens arméniens, t. 1, st. Petersbourg, 1874" գրքի XIII էջը, սակայն այնտեղ կարդում ենք. „... le même Vardan mentionne p. 105, un Ismaélite nommé Dchahap, qui avait épouse une fille du prince Mouchegh Mamikonian, lui ayant apporté en dot une grande partie du canton d'Archarounik, situé au centre de la province d'Ararat. Նույն Վարդանը (էջ 105) հիշատակում է Իսմայելցի Ջահհաֆ անունով մեկին, որն ամուսնացել էր Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ և որը նրան որպես օժիտ տվել էր Արշարունիք գավառի մեծ մասը՝ Այրարատ նահանգի կենտրոնում։

36 Վարդան, էջ 105։

հագրգռվածությունը, որը հանդես էր բերում Մամիկոնյան իշխանադուստրը Ջահհաֆի հետ իր ամուսնության խնդրում, քանի որ դրանով կապավիներ նրա ուժին[37]։ Այս փաստն արդեն անուղղակիորեն հաստատում է Մամիկոնյան տոհմի թուլությունն ու քայքայվածությունը[38]։

Պատմագիտական դրականության մեջ նշվել է, որ 747—750 թթ. հակաարաբական ապստամբությունից հետո Բագրատունիները Մամիկոնյաններից նվաճեցին Տարոնը, որի Բագրատունյաց առաջին իշխան դարձավ Սահակ Բագրատունին[39]։ Այնուհետև ցույց է արվել, որ հետագայում հայոց սպարապետ Սմբատ Բագրատունուն հաջողվել է Տարոնից դուրս քշել իր զարմիկներին, որոնք Սահակի ժառանգներն էին, և այնտեղ հաստատել իր եղբորը՝ Վասակ Բագրատունուն[40]։ Այս տեսակետն առաջադրողը թեպետև հենվել է Ղևոնդի տվյալների վրա, սակայն նկատենք, որ նրանում ոչ ուղղակի և ոչ էլ անուղղակի որևէ փաստ չկա նման եզրակացության հանգելու համար։ Ավելին, պատմիչի վկայությունների քննությամբ առավել հավանական է դառնում այն, որ Տարոնը Բագրատունիներին է անցել ոչ թե 750, այլ 775 թ. հետո։

Ըստ Ղևոնդի, 774—775 թթ. ապստամբության ղեկավար Մուշեղ Մամիկոնյանը «միարանեալ ընդ իւր զոմանս ի նախարարացն Հայոց՝ ի բաց եկաց ի հնազանդութենէ Իսմայելի. և գտեալ զոմանս յորդւոցն Իսմայելի ի գաւառի իւրում և ի տան իւրում, որք եկեալ պահանջէին ի նմանէ զարիւնս ոմանց սպանելոց ի տոհմէ իւրեանց՝ խողխողէր զնոսա ի սուր սուսերի իւրոյ։ Եւ ինքն գաղթէր յամրոցն Արտագերոյ հանդերձ տամբ իւրով[41]։

Մուշեղ Մամիկոնյանի Արտագերս գալը որքան էլ խիզախ քայլ համարենք և գիտենք որպես մարտահրավեր Դվինում ու Կարինում հաստատված արաբական կայազորներին, այնուամենայնիվ, այնտեղ հաստատվելով նա նախ ձգտում էր իր ընտանիքի անդամներին ապահովել թշնամու հարձակման վտանգից։ Որտեղի՞ց կարող էր Մուշեղ Մամիկոնյանը գաղթել Արտագերս. կամ Տայքից, կամ էլ Տարոնից։ Նրա սեփական գավառները կարող էին լինել Տայքն ու Տարոնը[42], քանի որ պատմիչը պարզորոշ նշում է՝ արարները եկել էին նրա գավառը և ձգտում էին իրենց արյունակիցների սպանության համար վրեժխնդիր լինել։ Տայքում, բնականաբար, նա չէր կարող լինել. արաբների դեմ ապստամբություն նախապատրաստող Մուշեղը չէր կարող ապրել Հայաստանի ծայրագույն նահանգում՝ կտրվելով երկրի քաղաքական կյանքից։ Եթե անգամ ընդունենք, թե Մուշեղը Տայքում էր, ապա այն ապահովության հուսալի վայր էր, քանի որ մինչ այդ հայ նախարարներից շատերը խուսափելով արաբական հետապնդումներից, բազմիցս ապաստանել էին այնտեղ։

---

37 Ուշագրավ է, որ Ն. Ակինյանը Մուշեղի դատեր կատարած այս քայլը նաև դիտում է նրա կողմից իր հայրական կալվածքները Բագրատունիների ոտնձգություններից զերծ պահելու փորձ (Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտություններ, հ. Գ, Վիեննա, 1930, էջ 247)։

38 Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, էջ 51։

39 J. Laurent, նշվ. աշխ., էջ 93։ տե՛ս նաև R, Grousset, Histoire de l'Armenie des origines a 1071, Paris, 1947, p. 321.

40 J. Laurent, նշվ. աշխ., էջ 93։

41 Ղևոնդ, էջ 139։

42 Բագրևանդում ևս Մամիկոնյաններ կային, սակայն պատմիչի այն հաղորդումից, թե Մուշեղը սկզբում ոչնչացրեց իր գավառի արարներին, ապա՝ Բագրևանդում եղած հարկահաներին, պարզ է դառնում, որ նրա գավառը և Բագրևանդը չեն նույնանում (նույն տեղում, էջ 139)։

Հետևաբար, հազիվ թե Մուշեղ Մամիկոնյանը ձգտեր ավելի մոտ լինել արաբներին, այսինքն Տայքից գալով հաստատվեր Արտագերսում։ Այսքանից հետո առավել հավանական է թվում, որ Մուշեղ Մամիկոնյանն Արտագերս է գաղթել Տարոնից։ Եվ եթե 774—775 թթ. ապստամբության ժամանակ այն դեռևս պատկանում էր Մուշեղ Մամիկոնյանին, հետևաբար, մինչ այդ այնտեղ Բագրատունյաց իշխանություն չէր կարող լինել։

Անդրադառնալով այն հայ նախարարներին, որոնք վարանում էին մասնակցել արդեն սկսված ապստամբությանը, Ղևոնդը գրում է. «Զի նախարարք տանն Արծրունեաց Համազասպ և եղբարք իւր և զօրք նորին մնացին անդէն ի կողմանս Վասպուրական աշխարհին. և Վասակ որդի Աշոտոյ և որ ի տոհմէ Ամատունեացն և Տրունեաց՝ մնացին անդէն, ոմանք յամուրս բերդի ի Դարիւնս գեօղ և ի ծագն Մակուայ, և ոմանք ի ձորն Արագեղտայ ամրացեալք՝ սփռէին շուրջ զգաւառօքն ի պէտս կերակրոց և անդրէն դառնային յամուրս իւրեանց»[43]։ Ղևոնդի այս կարևոր վկայությունը մեկ անգամ ևս համոզում է, որ Վասակ Բագրատունին ոչ թե իշխում էր Տարոնում, ինչպես գտնում է Լորանը, այլ Բագրատունիների տոհմական գավառում՝ Կոգովիտի Դարույնքում։

Վերջապես, Մամիկոնյանների կողմից 774—775 թթ. ապստամբությունը ղեկավարելու փաստն ինքնին խոսում է Տարոնը 750 թ. Բագրատունիներին անցած լինելու կարծիքի դեմ։ Այդ ելույթն, իրավամբ, դիտվել է իբրև օտար լծի դեմ ուղղված երկրորդ համաժողովրդական և հուժկու ընդվզումը 450—451 թթ. հետո[44]։ Եթե Մամիկոնյաններն այնքան ուժեղ էին, որ կարողացան կազմակերպել ու ղեկավարել նման ելույթ, հետևաբար նրանց դիրքերը Հայաստանում դեռևս չէին սասանվել ու հազիվ թե նրանք կորցրած լինեին իրենց տիրույթները։

774—775 թթ. ապստամբության հետևանքով Մամիկոնյանների՝ Հայաստանի քաղաքական կյանքից հեռանալը լայն հնարավորություն էր ստեղծում նրանց մրցակից Բագրատունիների վերելքի համար։ Ճիշտ է, նրանք նույնպես մասնակցել էին հակախալիֆայական այդ ընդվզումներին, սակայն կարողացան պահպանել իրենց դոյությունը։ Շուտով, Բագրևանդի ճակատամարտից շատ չանցած, այնտեղ զոհված Բագրատունու որդիներ Աշոտը և Շապուհը, որոնց մայրը ապստամբության ղեկավար Սամվել Մամիկոնյանի դուստրն էր, ձեռնամուխ եղան իրենց տիրույթների ընդարձակմանը։ Աշոտ Բագրատունու և նրա եղբոր՝ Շապուհի, վաղ շրջանի գործունեությունը թեպետ թաղված է անորոշության մեջ, սակայն պարզ է, որ հենց սկզբից նրանք ցուցաբերեցին մեծ ջանքեր՝ հայկական հողերի միավորման համար։ Երկրում գերակշիռ դիրք գրավելու համար մղվող պայքարը, բնական է, լինելու էր համառ ու անզիջում։ Այն մղվում էր ոչ միայն առանձին վերացած կամ դեռևս իրենց գոյությունը պահպանած հայկական նախարարական տոհմերի սեփականությունը ժառանգելու, կամ նրանց նկատմամբ առաջնություն ապահովելու համար,

---

43 Նույն տեղում, էջ 144։ Արդյո՞ք այս վկայությունից երևում է, թե Դարույնքը պատկանում էր Համազասպ Արծրունուն, ինչպես կարծում է Լորանը (J. Laurent, նշվ. աշխ., էջ 99)։ Դարույնքը Բագրատունիների տիրույթն էր մինչև այն ժամանակաշրջանը, երբ Աշոտ Մոակերը Կամսարականներից գնեց Արշարունքը («Ստեփանոսի Տարոնեցւոյ, Ասողկան, Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 106)։

44 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 525, հմմտ. Ս. Տ. Մելիք-Բախշյան, Հայաստանը 7—9-րդ դարերում, Երևան, 1968, էջ 327։

այլև՝ տեղի արաբ ավատատերերի ու խալիֆայության թշնամանքի պայմաններում։

785 թ. Ներսեհ Կամսարականի մահվանից հետո Կամսարականները նույնպես վերացան Հայաստանի քաղաքական կյանքից։ Աշոտ Բագրատունին «գանձագին արար զգաւառն Արշարունեաց, յազգէն Կամսարականաց և զարքունիսն ի Կոգովտէ յԱրշարունիս փոխեաց»[45]։ Տիրելով Արշարունիքի մի մասին, նա անմիջականորեն կանգնեց Ջահհաֆի դեմ պայքարելու ուղու վրա, որովհետև, ինչպես արդեն տեսանք, վերջինս տիրում էր այդ գավառի մյուս մասին։ Աշոտի և Շապուհի համատեղ գործողությամբ Ջահհաֆը դուրս քշվեց Արշարունիքից։ Նրանք գրավեցին Տայքը, Շիրակը և Աշոցքը[46]։

Աշոտ Մսակերի ջանքերով Գնունիները զերծ մնացին արաբների հետագա հալածանքներից՝ Աղիովիտից գաղթելով Տայք[47]։ Նա չէր կարող ուշադրություն չդարձնել Տարոնին տիրելու վրա, քանի որ դրանով հնարավորություն կստանար կասեցնել արաբների ներգաղթը դեպի Հայաստանի իր գրաված շրջանները։ Տարոնի ձեռքբերումով Բագրատունիների օրավուր աճող ազդեցությունը կտարածվեր նրա հարևան շրջանների վրա, իսկ քաղաքական նպաստավոր իրադրության դեպքում՝ կերաշխավորեր նրանց ակտիվ պայքարը արաբական զանգվածի դեմ։ Վերջապես, Աշոտ Բագրատունին Տարոնը կարող էր դիտել որպես ժառանգական կալվածք, քանի որ նրա մայրը, ինչպես արդեն տեսանք, Մամիկոնյան էր։

Ե՞րբ կարող էր Աշոտ Բագրատունին գրաված լինել Տարոնը։ Այս անցքերի միակ աղբյուրը՝ Վարդան պատմիչը, դժբախտաբար, չի հայտնում այդ թվականը։ Մարկվարտը ենթադրում է, որ Տարոնը պետք է Ջահհաֆյանների դեմ մղած պայքարի շնորհիվ Աշոտ Բագրատունուն անցած լիներ 820-ական թվականներին[48]։ Ուրեմն, Մարկվարտի, ինչպես նաև Լորանի կարծիքով, Տարոնը պատկանել է նախ Մամիկոնյաններին, այնուհետև՝ Ջահհաֆյաններին և 820-ական թվականներին անցել Աշոտ Մսակերին[49]։ Աղբյուրների վկայությունները, սակայն, չեն հաստատում Տարոնը Ջահհաֆյաններին անցած լինելու փաստը։

Ջահհաֆի որդին՝ Աբդ ալ Մալիքը 813 թ. կարճ ժամանակով Արմինիայի ոստիկան դարձավ[50]։ Շուտով, սակայն, նա պաշտոնազրկվեց և ապստամբեց խալիֆայության դեմ ու ներման արժանանալով՝ հաստատվեց Դվինում։ Այստեղ իր ուժերը համախմբելով, մոտավորապես հինգ հազարանոց բանակով նա փորձեց գրավել Տարոնը։ Աշոտ Մսակերը վաղորոք տեղեկանալով Աբդ ալ Մալիքի նպատակին, նախահարձակ եղավ և հինգ հարյուրանոց ուժերով նրան ետ մղեց։ Դրանից հետո Դվինի վրա շարժվեց Շապուհ Բագրատունին։ Աբդ ալ Մալիքի վիճակը բավական ծանրացավ։ Քաղաքի բնակչությունը դրժ-

45 Ասողիկ, էջ 106։

46 Վարդան, էջ 106։

47 Նույն տեղում։

48 J. Markwart, Südarmenien und die Tigrissquellen, Wien, 1930, S. 294. Հմմտ. Նույնի՝ Հայ Բագրատունյաց ճյուղագրությունը, էջ 106։

49 J. Laurent, նշվ. աշխ., էջ 102, ծան. 2։ Ըստ նրա Վասակ Բագրատունուց հետո Տարոնում հաստատվել էր Ջահհաֆը։

50 «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 115, հմմտ. նաև Հ. Նալբանդյան, Արաբացի ոստիկանները Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1956, № 8, էջ 118, Тизенгаузен, Монеты Восточного халифата, СПб, 1873, стр. 180.

գոհելով նրա շահատակություններից, ապստամբեց և սպանեց նրան[51]։ Այս դեպքերը տեղի են ունեցել մինչև 820 թ., բայց ոչ 820-ական թվականներին, քանի որ այդ ժամանակ Հայաստանում հանդես էր եկել մեկ այլ Ջահհաֆյան՝ Սևադան[52]։ Խոսելով Աբդ ալ Մալիքի՝ Տարոնը գրավելու փորձի մասին, Վարդան պատմիչը նշում է. «Բայց տունն Ջահասպայ զօրացեալ ի Դուին իբրև հինգ հազարաւ կամեցաւ գնալ ի Տարոն յիշխանութիւն Աշոտի՝ որդւոյ Սմբատայ»[53]։ Ուրեմն, 820 թ. առաջ արդեն Աշոտ Բագրատունին գրաված պետք է լիներ Տարոնը։ Ամենայն հավանականությամբ Տարոնը Բագրատունիներին է անցել VIII դ. վերջերին կամ IX դ. սկզբներին, բայց ոչ ուշ, քան մինչև 806 թ., երբ Աշոտ Մսակերը խալիֆայության կողմից ճանաչվեց որպես հայոց իշխան։

Աշոտ Մսակերի մահվանից հետո՝ 826 թ. նրա իշխանությունը բաժանվեց որդիների միջև։ Տարոնում սկսեց տիրել Բագարատ Բագրատունին, որը հիմք դրեց Տարոնի Բագրատունիների իշխանությանը։ Վերջինիս կարևորությունը հայ ժողովրդի պատմության մեջ ակնհայտ է։

ПОЛИТИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТАРОНА В VIII ВЕКЕ

Г. С. ГРИГОРЯН

Резюме

История области Тарон занимает значительное место в истории армянского народа.

В ответ на усиление ига Арабского халифата в 70-х гг. VIII в. развернулось народно-освободительное восстание, возглавляемое Мамиконидами. В результате подавления восстания и дальнейших преследований Мамикониды были вынуждены отдалиться от политической жизни Армении. В конце VIII и начале IX вв. борьба Багратидов с арабскими Джаафидами с целью присвоения владений Мамиконидов завершилась победой Багратидов.

После смерти отца сын Ашота Мсакера Багарат Багратуни в первой половине IX в. основал Таронское княжество Багратидов.

---

51 Վարդան, էջ 107։

52 Հ. Նալբանդյան, նշվ. աշխ., էջ 118, հմմտ. Մովսես Կաղանկատվացի։ Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 255։

53 Վարդան, էջ 107։